Արձանագրություն N 4
(լրամշակված տարբերակ)

«ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով իրականացվող
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդյունքների գնահատման նիստի

ք. Երևան

09 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Պեպանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Մարգարյան

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության վերաբերյալ

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը՝ հանձնաժողովը որոշեց «Էյչ վի էյ սի սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, արձանագրեց, որ չափաբաժինների մոդելները չեն համապատասխանում նրանց տեխնիկական բնութագրերին, ինչով պայմանավորված Հանձնաժողովը մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատեց անբավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի նիստի կասեցման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին ծանուցել՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել ընթացակարգի քարտուղարին փաստաթղթի շտկված տարբերակը կամ հիմնավորումը՝ մինչև ս.թ. նոյեմբերի 13-ը, ժամը՝ 10:00:

eauction.armeps.am համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովի կողմից «անբավարար» կոճակի փոխարեն սխալմամբ «բավարար» կոճակով գնահատվել են փաստաթղթերը և մասնակցին տրվել է շնորհում: Ուստի՝ համակարգում այլևս չկա փաստաթուղթ կցելու համապատասխան կոճակ: Այդ իսկ պատճառով՝ մասնակցին առաջարկվել է էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովի նիստը վերսկսելու վերաբերյալ

Հանձնաժողովի նիստը վերսկսվել է 14.11.2018թ. ժամը՝ 10:00-ին:

Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերն ուղարկվել են 12.11.2018թ.-ին, որոնք ուսումնասիրվելով՝ Հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. *Անգործության ժամկետի վերաբերյալ*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեռյան

_____ Ա. Պեպանյան

Քարտուղար՝ _____ Պ. Մարգարյան